Տիգրան Գրիգորյան[1]

ԵՄ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ, ՌՈՒՄԻՆԻԱՅԻ, ԽՈՐՎԱԹԻԱՅԻ ԵՎ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ՕՐԻՆԱԿՆԵՐՈՎ

Եվրոպական միության (ԵՄ) մասին Լիսաբոնի պայմանագրի 49-րդ հոդվածի համաձայն՝ «ցանկացած եվրոպական պետություն, որը հարգում է 2-րդ հոդվածում նշված արժեքները և պարտավորվում է դրանք խթանել, կարող է դիմել միությանը անդամակցության համար»: Այդ նույն պայմանագրի 2-րդ հոդվածը թվարկում է վերոնշյալ արժեքները, որոնք են մարդկային արժանապատվությունը, ազատությունը, ժողովրդավարությունը, հավասարությունը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքների, ներառյալ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների հարգումը[2]: Այսպիսով ԵՄ մասին պայմանագիրը սահմանում է, որ յուրաքանչյուր եվրոպական պետություն, որը հարգում է միության ժողովրդական արժեքները և պատրաստ է դրանք խթանել կարող է անդամակցության դիմում ներկայացնել:

ԵՄ անդամ դառնալու համար պետությունը նախևառաջ պետք է համապատասխանի անդամակցության հիմնական չափանիշներին, որոնք մեծ մասամբ սահմանվել են 1993 թ. Եվրոպական խորհրդի կողմից Կոպենհագենում և այդ պատճառով էլ առավել հայտնի են որպես «Կոպենհագենյան չափանիշներ»: Կոպենհագենյան չափանիշների համաձայն ԵՄ անդամակցել ցանկացող ցանկացած պետություն պետք է կարողանա ապահովել

– ժողովրդավարությունն, իրավունքի գերակայությունն, մարդու իրավունքների պաշտպանությունն ու փոքրամասնությունների հարգումն ապահովող ինստիտուտների կայունություն,

– շուկայական տնտեսությունն, ինչպես նաև միության ներսում մրցակցության ճնշմանը և շուկայի ուժերին դիմակայելու կարողություն,

---

[1] ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոն, ասպիրանտ, գիտ. ղեկավար՝ իր. գ. թ., դոցենտ Ա. Գ. Ղազինյան:

[2] Տե՛ս European Union, Consolidated Versions of the Treaty on European Union, March 2010, էջ 17:

– անդամակցության պարտավորությունների ստանձնման կարողություն, ներառյալ քաղաքական, տնտեսական և արժութային միության նպատակների իրականացում[3]:

ԵՄ-ն ևս պետք է պատրաստ լինի նոր անդամների ինտեգրմանը: Արևմտյան Բալկանների պետությունների համար սահմանվեցին լրացուցիչ պայմաններ, այսպես կոչված «Կայունացման և ասոցացման գործընթացի» շրջանակներում, որոնք հիմնականում վերաբերում են տարածաշրջանային համագործակցությանը և հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը[4]:

Վերոնշյալ չափանիշների բավարարման ընթացքում թեկնածու պետություններն իրականացնում են բազմաբնույթ բարեփոխումներ ամենատարբեր ոլորտներում՝ իրենց քաղաքական, տնտեսական և իրավական համակարգերը եվրոպական ստանդարտներին առավելագույնս մոտեցնելու համար: 1993 թ. Եվրոպական խորհրդի Կոպենհագենում կայացված հանդիպմանը, որով սահմանվեցին անդամակցության չափանիշները, Եվրոպական հանձնաժողովին վստահվեց ամեն տարի հրապարակել թեկնածու պետությունների՝ «անդամակցության ճանապարհին իրականացվող առաջընթացի վերաբերյալ զեկույցներ» և ներկայացնել դրանք Խորհրդին և Եվրոպական Խորհրդարանին:

Գաղնիք չէ, որ ընդլայնման քաղաքականությունը դարձել է ԵՄ կարևորագույն գործիքը ողջ Եվրոպայում ժողովրդավարության և իրավունքի գերակայության ընդլայնման, ինչպես նաև անվտանգության և կայունության ապահովման համար: Ընդլայնման քաղաքականության փոխակերպող ուժն արդեն իսկ ապացուցվել է Հարավարևելյան Եվրոպայի պետությունների դեպքում, որոնք 1970-ականներին անդամակցության միջոցով ազատվեցին բռնապետությունից, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի պետությունների դեպքում, ինչպես նաև Խորվաթիայի դեպքում, որը, դեռևս երկու տասնամյակ առաջ մեծապես տուժելով Բալկանյան աղետից, ներկայումս ԵՄ անդամակցության շնորհիվ ունի կայուն ժողովրդավարական համա-

---

[3] Տե՛ս European Council in Copenhagen, Conclusions of the Presidency, 21-22 June 1993, http://www.consilium.europa.eu/ueDocs/cms_Data/docs/pressData/en/ec/72921.pdf, էջ 13:

[4] Տե՛ս **Allan F. Tatham,** *Enlargement of the European Union,* Kluwer European Law Collection, 2009, էջ 240:

կարգ: Մեկ այլ ուշագրավ օրինակ դարձավ ԵՄ ուղղակի միջնորդությամբ Բելգրադի և Պրիշտինայի միջև բոլորովին վերջերս կնքված շատերի համար անհնարին թվացող հայտնի պայմանագիրը[5]:

ԵՄ անդամակցության բանակցությունների բոլոր փուլերում թեկնածու պետությունների՝ կոպենհագենյան չափանիշներին համապատասխանությունը վերահսկվում է Հանձնաժողովի կողմից: Մարդու իրավունքների հետ կապված ստանդարտները կարևորագույն, սակայն, ոչ գերիշխող դեր ունեն թեկնածու պետությունների ընդհանուր գնահատման գործընթացում: 1997 թ. Հանձնաժողովի կարծիքներում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տասը երկրներից միայն Սլովակիան չէր համապատասխանում քաղաքական չափանիշին և արդյունքում Եվրոպական Խորհուրդը Լյուքսեմբուրգում որոշում կայացրեց չընդգրկել Սլովակիան այն վեց երկրների շարքում, որոնց հետ բանակցությունները կարող էին սկսվել[6]: Այդուհանդերձ 1998 թ. Սլովակիայում կառավարության փոփոխությունից հետո Եվրոպական Խորհրդի և Հանձնաժողովի վերաբերմունքը վերջինիս հանդեպ կտրուկ փոխվեց և 1999 թ. Հանձնաժողովի զեկույցի համաձայն այն արդեն իսկ համապատասխանում էր կոպենհագենյան քաղաքական չափանիշին և Հելսինկիի Եվրոպական Խորհրդում որոշում կայացվեց սկսել անդամակցության բանակցությունները[7]:

Կարող է տպավորություն ստեղծվել, որ եթե Հանձնաժողովը և Եվրոպական Խորհուրդը գտնում են, որ թեկնածու պետությունը համապատասխանում է մարդու իրավունքների չափանիշներին, ապա դա վերջնական բնույթ ունի և մինչ անդամակցության պայմանագրի ստորագրմանը նախորդող վերջնական գնահատումը այդ պետության ներքին քաղաքական և մարդու իրավունքների վերաբերյալ իրավիճակը մեկնաբանությունների չի ենթարկվում: Իրականում դա այդպես չէ և թեկնածու պետությունների՝ անդամակցության չափանիշներին համապատասխանության ստուգումը շարունակական բնույթ

---

[5] Տե՛ս Ilir Deda & Ariana Qosaj-Mustafa, «The implementation of Agreements of Kosovo – Serbia Political Dialogue», Kosovar Institute for Policy Research and Development, N 4/13, Pristina, July 2013, էջ 5:

[6] Տե՛ս Steve Peers, Dr. Angela Ward, *The European Union Charter of Fundamental Rights,* Hart Publishing, 2004:

[7] Տե՛ս Geoffrey Pridham, «The European Union's Democratic Conditionality and Domestic Politics in Slovakia: the Meciar and Dzurinda Governments Compared», Europe-Asia Studies, 2002, էջ 203:

է կրում և արտացոլվում է թեկնածու պետությունների վերաբերյալ Հանձնաժողովի հրապարակած պարբերական զեկույցներում:

Առաջընթացի տարեկան զեկույցները նպատակ ունեն մասամբ աբստրակտ կերպով ձևակերպված Կոպենհագենյան չափանիշների սկզբունքները համապատասխանեցնել յուրաքանչյուր թեկնածու պետությունում առկա կոնկրետ իրավիճակին: Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս քաղաքական չափանիշների վերաբերյալ ցանկացած արտահայտություն մասնատել առավել կարճ արտահայտությունների և թեկնածու պետություններից պահանջվող գործնական քայլերի: Նման պրակտիկայի կիրառման անհրաժեշտությունը հիմնավորվում է այն հանգամանքով, որ միայն այսպիսի մոտեցումը կապահովի «հավասար վերաբերմունք թեկնածու բոլոր պետությունների համար», ինչպես նաև «թեկնածու պետությունների կողմից անդամակցության ճանապարհին գրանցած առաջընթացի օբյեկտիվ գնահատում և համեմատում»[8]: Հարկ է նշել, սակայն, որ որոշ առանձին դեպքեր կասկածի տակ են դնում անդամակցության չափանիշների գնահատման ողջ գործընթացի օբյեկտիվությունը:

Տվյալ աշխատությունում մեր կողմից կուսումնասիրվեն Բուլղարիայի, Խորվաթիայի, Մակեդոնիայի Հանրապետության և Ռումինիայի կողմից 2004-2006 թթ. գրանցած առաջընթացի գնահատումը: Կոպենհագենյան չափանիշներն ու դրանք աջակցող պայմանները ներկայացվել էին որպես արդար և բաց ճանապարհ անդամակցության համար մրցակցելու, գործնական կարծիքներ ձեռք բերելու և ի վերջո առավել արդյունավետ կերպով չափանիշները կատարելու միջոցներ[9]: ԵՄ ինստիտուտներն ու անդամ պետությունները մշտապես նշում էին, որ միայն փոխադարձ վստահության պայմաններում առկա միացյալ և թափանցիկ ջանքերի շնորհիվ է հնարավոր հասնել ընդլայնման քաղաքականության ամենաարագ ու արդյունավետ ռազմավարությանը: Այդուհանդերձ կարծիքներ կան, որ ԵՄ-ն ամբողջությամբ ի վիճակի չեղավ ապահովել թափանցիկություն, քանի

---

[8] Տե՛ս European Commission, Regular Report from the Commission on Poland's Progress Towards Accession, 1999, էջ 5, http://ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/1999/poland_en.pdf:

[9] Տե՛ս Viljar Veebel, «Relevance of Copenhagen Criteria in Actual Accession: Principles, Methods and Shortcomings of EU Pre-accession Evaluation», Studies of Transition States and Societies, vol. 3, 2011, էջ 3:

որ չափանիշները քանակական չէին և ոչ էլ հստակ չափելի, դրանք ֆիքսված չէին ընդլայնման ողջ ժամանակահատվածի ընթացքում և չէին չափվում անկողմնակալ մարմնի կողմից, ինչպես նաև գնահատականները հակված էին ներառել պաշտոնական չափանիշներից դուրս գտնվող լրացուցիչ կատեգորիաներ: Նման իրավիճակում, որտեղ այս թերությունները հիմնականում քաղաքական ընտրության արդյունք են և ոչ տեխնիկական հնարավորությունների պակաս, առաջանում է անդամակցության չափանիշների գնահատման օբյեկտիվության հիմնահարցը: Հետաքրքրական է այն փաստը, որ ԵՄ-ն ստեղծեց գնահատման միանգամայն նոր համակարգ այն դեպքում, երբ կոպենհագենյան չափանիշների բաղադրիչների մեծամասնությունը անաչառ կերպով պարբերաբար չափվում էին մի շարք միջազգային կազմակերպությունների և գործակալությունների կողմից:

Ուսումնասիրության համար առանձնացված պետությունների ընտրությունը պայմանավորված է տարածաշրջանային, պատմական և մշակութային առումներով ունեցած նմանություններով, որոնք, սակայն, ոչ միշտ են հաշվի առնվում անդամակցության դեպքում: Վերոնշյալ պետությունների՝ անդամակցության չափանիշներին համապատասխանության գնահատման վերլուծության մեթոդը հիմնվելու է Հանձնաժողովի հրապարակած առաջընթացի զեկույցների և այլ հիմնական գնահատողների կողմից արձանագրած արդյունքների համեմատության վրա:

Կառավարման արդյունավետության չափորոշիչները ցույց են տալիս ժողովրդավարության մակարդակը, ինստիտուտների կայունությունը և փոքրամասնությունների իրավունքների հարգանքը, որոնք Հանձնաժողովից բացի պարբերաբար գնահատվում են նաև Համաշխարհային բանկի, Բերտելսման հիմնադրամի և Freedom House-ի կողմից: Կառավարման արդյունավետությունը գնահատող չափանիշները Մակեդոնիայի և Խորվաթիայի վերաբերյալ Հանձնաժողովի զեկույցներում ներառում էին նաև լրացուցիչ պայմաններ, ինչպիսիք են «տարածաշրջանային համագործակցությունը, հարևան պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններն ու միջազգային պարտավորությունների հարգումը, ինչպիսին է ՄԱԿ-ի նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական տրիբունալի հետ համագոր-

ծակցությունը»[10]:

Հանձնաժողովի գնահատումը չի ներառում որևէ քանակական կատեգորիաներ և ոչ էլ առաջընթացի մակարդակներ: Այս պարագայում կենտրոնական չափելի ասպեկտ է հանդիսանում Հանձնաժողովի եզրակացությունը, որ որոշ երկրներ պատրաստ են անդամակցությանը, իսկ որոշ երկրներ դեռևս պարտավոր են շարունակական բարեփոխումներ իրականացնել: Եվրոպական հանձնաժողովի կողմից կիրառվող հիմնական գնահատող կատեգորիաներն են հետևյալ արտահայտությունները՝ «պետությունը հասել է հաջողության…», «պետությունը զարգանում է», «երկրում առկա են մի շարք խնդիրներ», «սահմանափակ առաջընթաց», «բարեփոխումները պետք է արագացվեն»:

Անկախ գնահատում իրականացնող մի շարք կառույցների աշխատանքները թույլ են տալիս մեզ տեսնել թեկնածու պետությունների միջև տարբեր ոլորտներում առկա տարբերությունները տոկոսային հարաբերակցությամբ: Հիմք ընդունելով 2004-2006 թթ. Համաշխարհային բանկի, Freedom House-ի և Բերտելսման հիմնադրամի զեկույցները՝ ակնհայտ է, որ Խորվաթիան գրանցում է առավելագույն արդյունքները՝ 10% առավելությամբ իր ետևում թողնելով թե Ռումինիային ու Բուլղարիային և թե Մակեդոնիային: Այդուհանդերձ Հանձնաժողովի կարծիքով այդ երկու երկրներն առավել պատրաստ էին անդամակցությանը և հենց նրանք 2007 թ. միացան միությանը: Խորվաթիայի նկատմամբ Հանձնաժողովի բացասական վերաբերմունքը երևում է տարեկան զեկույցներում: Այսպես օրինակ 2006 թ. առաջընթացի զեկույցում նշվում էր, որ կոռուպցիայի մակարդակը երկրում շարունակում է աճել համեմատած նախորդ տարիների, այն դեպքում, երբ այլ գնահատողների կարծիքով իրավիճակը երկրում բարելավվում էր[11]: Այսպիսով ուսումնասիրելով անկախ գնահատողների աշխատանքի արդյունքները, որոնք հիմնված են ինդեքսավորված աղբյուրների վրա՝ պարզ է դառնում, որ նշված ժամանակահատվածում հենց Խորվաթիան է գրանցել լավագույն արդյունքները և վեր-

---

[10] Տե՛ս European Commission, Regular Report from the Commission on FYROM's Progress Towards Accession, 2006, p. 5; European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006, էջ 5:

[11] Տե՛ս European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006, էջ 8:

ջինս առավել շատ է համապատասխանել ԵՄ անդամակցության չափանիշներին:

Հանձնաժողովի կողմից իրավունքի գերակայության գնահատման ենթաբաղադրիչներն են փոքրամասնությունների և բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքը, գենդերային հավասարությունը, երեխաների և հաշմանդամների իրավունքների պաշտպանությունը: ԵՄ-ն այս կատեգորիաները գնահատելիս քննադատական մոտեցում է ցուցաբերում՝ խուսափելով լիովին դրական գնահատականներ տալուց: Այս ոլորտներում բացթողումները հիմնականում վերաբերում են բանտարկյալների նկատմամբ վերաբերմունքին, վկաների պաշտպանությանը, դատական համակարգում անհրաժեշտ բարեփոխումների բացակայությանը և այլն: Այս ոլորտում Հանձնաժողովի գնահատականներով Ռումինիան գտնվում է առաջին տեղում, Բուլղարիան՝ երկրորդ, իսկ Խորվաթիան և Մակեդոնիան՝ համապատասխանաբար երրորդ և չորրորդ տեղերում: Իրավունքի գերակայության ոլորտում ևս անկախ գնահատողների արդյունքները մասամբ տարբերվում էին Հանձնաժողովի հրապարակած արդյունքներից: Անկախ գնահատողները, կիրառելով նմանատիպ ենթաբաղադրիչներ, Բուլղարիային առանձնացրեցին որպես ոլորտի առաջատար, որը սակայն նրանց կարծիքով ուներ կառուցվածքային խնդիրներ: Խորվաթիան և Ռումինիան, չարժանանալով որևէ կոնկրետ քննադատության, հավասարապես զբաղեցնում էին երկրորդ և երրորդ տեղերը: Մակեդոնիան, որն ուներ մի շարք խնդիրներ ոստիկանության, կրոնական խտրականության և այլ ոլորտներում, զբաղեցնում էր վերջին հորիզոնականը[12]: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, Հանձնաժողովի և անկախ կազմակերպությունների գնահատականների միջև տարբերությունները չնչին են:

Կոռուպցիայի մակարդակը և հակակոռուպցիոն միջոցառումների արդյունավետությունը ևս Հանձնաժողովից բացի պարբերաբար գնահատվում է այնպիսի կառույցների կողմից, ինչիսիք են Համաշխարհային բանկը, Բերտելսման հիմնադրամը, Transparency International-ը և Freedom House-ը: Հանձնաժողովի կողմից կիրառվող հիմնական ենթաբաղադրիչներն են հակակոռուպցիոն միջոցառումների համար առկա իրավական դաշտը, անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառուցվածքի և

[12] Տե՛ս Bertelsmann Foundation Report 2006, Freedeom House Report 2006, World Bank Report 2006:

փորձագետների առկայությունը, ինչպես նաև միջոցառումների իրականացման նկատմամբ հանրային հետաքրքրության առկայությունը: Այս ոլորտում ևս Եվրոպական հանձնաժողովը չի կիրառում որակական կատեգորիաներ: Փոխարենը Հանձնաժողովը նշում է, որ Բուլղարիայի դեպքում «փաստերը վկայում են կոռուպցիայի դեմ պայքարի բարձր մակարդակի մասին», Ռումինիան «ցուցաբերում է առաջընթաց», բայց «իրավիճակը լուրջ է և կրիտիկական», Խորվաթիայում «կոռուպցիան շարունակում է մնալ կարևոր խնդիր», իսկ Մակեդոնիայում առկա է «կոռուպցիայի դեմ պայքարելու համար ցածր քաղաքական կամք»[13]: Հանձնաժողովի գնահատմամբ Բուլղարիան կրկին լավագույն ցուցանիշներն ուներ ոլորտում, իսկ Մակեդոնիան՝ վատագույն: Խորվաթիայի պարագայում Հանձնաժողովը նշեց նաև, որ «կոռուպցիայի հաղթահարման ոլորտում գրանցած առաջընթացը հետագայում կլինի Խորվաթիայի անդամակցության պատրաստակամությունը ցույց տվող կարևորագույն ցուցանիշ»[14]:

Բերտելսման հիմնադրամի և Transparency International-ի գնահատականներով Բուլղարիան և Խորվաթիան կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում հավասարապես զբաղեցնում էին առաջին տեղը: Համեմատությունները ցույց են տալիս, որ Եվրոպական հանձնաժողովի և անկախ կառույցների գնահատականները համընկնում են Բուլղարիայի և Մակեդոնիայի դեպքում: Տարբերություններն առաջ են գալիս Ռումինիայի և Խորվաթիայի դեպքում: Ռումինիան, որը անկախ կազմակերպությունների գնահատականներով հաստատուն կերպով գտնվում է երրորդ տեղում, Հանձնաժողովի գնահատականներով երկրորդն է, մինչդեռ Խորվաթիան, անկախ գնահատումների արդյունքում գրանցելով լավագույն ցուցանիշներից մեկը, Հանձնաժողովի զեկույցների համաձայն ետ է մնում Բուլղարիայից և Ռումինիայից:

Իրավական համակարգի արդյունավետությունը ցույց է տալիս իրավական գործընթացների արագությունն ու թափանցիկությունը, սեփականության պաշտպանության և մրցակցային օրենքների մա-

---

[13] Տե՛ս European Commission, Monitoring report on the state of preparadness for EU membership of Bulgaria and Romania, 2006, էջ 4, 5; European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006, էջ 8; Regular Report from the Commission on FYROM's Progress Towards Accession, 2006, էջ 11:

[14] Տե՛ս European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006, էջ 9:

կարդակը: Իրավական համակարգի արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է Համաշխարհային բանկի, Բերտելսման հիմնադրամի և Ֆրասեր ինստիտուտի կողմից: Վերջիններիս կիրառած ենթաբաղադրիչները, ինչպիսիք են կարտելների դեմ արդյունավետ պայքարը, մտավոր և արդյունաբերական սեփականության իրավունքները և սեփականության վեճերի արդյունավետությունը, հիմնականում համընկնում են Հանձնաժողովի կիրառած ենթաբաղադրիչների հետ: Այս ոլորտում ևս Հանձնաժողովը քանակական կատեգորիաներ և առաջընթացի մակարդակներ չի կիրառում: Կենտրոնական չափելի ասպեկտն էր այն, որ Բուլղարիայի և Ռումինիայի դեպքում առկա է բավարար առաջընթաց, մինչդեռ Խորվաթիան և Մակեդոնիան պետք է շարունակեն բարեփոխումները: Թեկնածու պետությունների հետ կապված խնդիրները կապված են ոչ թե համայնքային օրենսդրության հարմոնիզացիայի, այլ դրա գործնական կիրառության և արդյունավետության հետ[15]: Ամփոփելով ոլորտում անկախ կազմակերպությունների գնահատականները՝ պարզ է դառնում, որ 2004-2006 թթ. Բուլղարիան ունեցել է լավագույն առաջընթացը, որին չնչին տարբերությամբ հաջորդել են Խորվաթիան և Ռումինիան: Հետաքրքրական է, որ օրինակ Ֆրասեր ինստիտուտի գնահատականներով հենց Խորվաթիան է զբաղեցրել առաջին տեղը, իսկ Բուլղարիան՝ ընդամենը երրորդ: Մակեդոնիան բոլոր գնահատականներով զբաղեցրել է վերջին տեղը:

Տնտեսական ազատության գնահատման ոլորտում կիրառվող հիմնական ենթաբաղադրիչներն են ձեռնարկություններ հիմնելու և փակելու, աշխատանքային շուկա մուտք գործելու, օտարերկրյա ներդրումային գործիքների մատչելիությունը, օտարերկրացիների համար անշարժ գույքի սեփականության պայմանները, մտավոր սեփականության իրավունքը և ձեռնարկատիրական օրենսդրության զարգացումը[16]: Նշված ոլորտում Հանձնաժողովի զեկույցները հիմնականում քննադատական են և պարունակում են այնպիսի գնահատո-

---

[15] Տե՛ս European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006; Regular Report from the Commission on FYROM's Progress Towards Accession, 2006:

[16] Տե՛ս Viljar Veebel, «Relevance of Copenhagen Criteria in Actual Accession: Principles, Methods and Shortcomings of EU Pre-accession Evaluation», Studies of Transition States and Societies, vol. 3, 2011, էջ 15:

ղական կատեգորիաներ, ինչպիսիք են «բավարար առաջընթացի բացակայություն», «լրացուցիչ ջանքերի ծայրահեղ անհրաժեշտություն», «մասնակի հաջողություն», «զգալի առաջընթաց» և այլն[17]: Նշված ոլորտում ևս Հանձնաժողովի գնահատմամբ Բուլղարիան զգալի առաջընթաց է գրանցել, իսկ Ռումինիան միայն մասնակիորեն է ստացել դրական գնահատական: Խորվաթիան և Մակեդոնիան զգալիորեն ետ են մնում նրանցից: Պատկերն այլ է անկախ գնահատողների կատարած ուսումնասիրություններում: Վերջիններիս կողմից տնտեսական ազատության ոլորտում Բուլղարիան և Խորվաթիան հավասարապես զբաղեցնում են առաջին տեղը՝ իրենց ետևում թողնելով Խորվաթիային և Մակեդոնիային: Արդյունքում Հանձնաժողովի գնահատականները լիովին համընկնում են միայն Մակեդոնիայի դեպքում:

Ամփոփելով վերոնշյալը հարկ է նշել, որ Եվրոպական հանձնաժողովի նպատակը մշտապես եղել է նախաանդամակցային շրջանում թեկնածու պետությունների համար ապահովել թափանցիկ և մրցակցային միջավայր: Արդյունքում այդ գործընթացի թափանցիկությունն ու մրցակցային բնույթը, հատկապես, երբ Բուլղարիան և Ռումինիան չմիացան միությանը 2004 թ. և հետագայում Խորվաթիայի առաջընթացի գնահատման հետ կապված դժվարություններ առաջացան, ենթարկվեցին մի շարք քննադատությունների: Հետաքրքրական է նաև այն փաստը, որ ԵՄ-ն ստեղծեց գնահատման սեփական համակարգը՝ ԵԱՀԿ-ի, Համաշխարհային Բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Freedom House-ի և այլ հեղինակավոր կազմակերպությունների կողմից հրապարակվող բավականին մանրակրկիտ ուսումնասիրություններ պարունակող զեկույցները կիրառելու փոխարեն: Բուլղարիայի, Ռումինիայի, Խորվաթիայի և Մակեդոնիայի անդամակցության հետ կապված հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ առկա են ԵՄ անդամակցության չափանիշների գնահատման երկու տարբեր մոտեցումներ: Բուլղարիայի և Մակեդոնիայի դեպքում Հանձնաժողովի կողմից բերված արդյունքները գրեթե լիովին համապատասխանում էին անկախ գնահատողների կողմից գրանցած արդյունքներին: Չափանիշների ենթաբաղադրիչները ևս հիմնա-

[17] Տե՛ս European Commission, Monitoring report on the state of preparadness for EU membership of Bulgaria and Romania, 2006; European Commission, Regular Report from the Commission on Croatia's Progress Towards Accession, 2006; Regular Report from the Commission on FYROM's Progress Towards Accession, 2006:

կանում նույնն էին։ Ռումինիայի և Խորվաթիայի դեպքում, ընդհակառակը՝ Եվրոպական հանձնաժողովի գնահատման արդյունքներն էականորեն տարբերվում էին չեզոք կազմակերպությունների գնահատականներից։ Նշված տարբերությունները, որոնք համակարգված էին և ազդեցիկ, Ռումինիայի և Խորվաթիայի դեպքում մեծ ազդեցություն ունեցան Եվրոպական հանձնաժողովի և անդամ պետությունների մոտիվացիայի վրա։ Արդյունքում Ռումինիան, որն ամբողջովին չէր համապատասխանում անդամակցության չափանիշներին միացավ միությանը 2007 թ., իսկ Խորվաթիան, որն առավել մեծ առաջընթաց էր գրանցել կոպենհագենյան չափանիշների համապատասխանության ոլորտում՝ ոչ։ Պարբերական գնահատականներն ու առաջընթացի զեկույցները ոչ միայն կիրառվում էին ընտրելու թեկնածու պետություններին և գնահատելու անդամակցության ճանապարհին վերջիններիս գրանցած առաջընթացը, այլ նաև հիմնավորելու համար այն քաղաքական իրականությունը, որը պահանջեց Բուլղարիայի և Ռումինիայի անդամակցությունը և Խորվաթիայի անդամակցության մերժումը՝ չնայած կոպենհագենյան չափանիշների ոլորտում գրանցած փաստացի առաջընթացին։ ԵՄ գնահատման անկողմնակալությունն ու թափանցիկությունը ներկայումս ևս շարունակում է արդիական խնդիր մնալ։

Тигран Григорян
Аспирант кафедры европейского и международного права ЕГУ

ОЦЕНКА КРИТЕРИЕВ ЧЛЕНСТВА В ЕС НА ПРИМЕРАХ БОЛГАРИИ, РУМЫНИИ, ХОРВАТИИ И МАКЕДОНИИ

Данная статья исследует оценку критериев членства в ЕС. Не секрет, что политика расширения стала самым важным инструментом для продвижения демократии и верховенство права, а также для обеспечения безопасности и стабильности во всей Европе. Преобразующий характер расширения был доказан в 1970-х, когда страны Центральной и Восточной Европы избавились от своих авторитарных режимов.

Оценка соответствия стран-кандидатов Копенгагенским критериям во время переговоров о вступлении проводится Европейской комиссией. Сравнивая процедуры вступления Болгарии, Хорватии, Македонии и Румынии, статья докажет, что беспристрастность оценки критериев членства в ЕС может часто подвергаться сомнению.

Tigran Grigoryan
Ph.D student of the YSU Chair of European and International Law

THE ASSESSMENT OF EU MEMBERSHIP CRITERIA IN THE CASES OF BULGARIA, ROMANIA, CROATIA AND FYROM

The present article examines the assessment of the EU membership criteria. It's not a secret that the Enlargement policy has become the most important tool for the promotion of democracy and the rule of law, as well as for ensuring security and stability in the whole Europe. The transformative power of the Enlargement policy was proved in 1970's when the Central and Eastern European Countries got rid of their authoritarian regimes.

The assessment of the candidate countries correspondence with the Copenhagen criteria during the accession negotiations is conducted by the European Commission. By comparing the accession procedures of Bulgaria, Croatia, FYROM and Romania, the article will prove that the impartiality of the assessment of EU membership criteria can often be questioned.

Բանալի բառեր՝ *ԵՄ ընդլայնում, անդամակցության չափանիշներ, գնահատում, Բուլղարիա, Խորվաթիա, Մակեդոնիա, Ռումինիա:*
Ключевые слова: *расширение Евросоюза, критерии членства, оценка, Болгария, Хорватия, Македония, Румыния.*
Key words: *EU Enlargement, Membership Criteria, Assessment, Bulgaria, Croatia, FYROM, Romania.*